



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.



MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 11199
Մայիս 5, 1964

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԲՀՆԵՄ Փափազեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Մխական Խորհուրդի
Տիժրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Ձեր 1964 Մարտ 31 թուակիր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ Փետրուար 28ին գումարուած Տարեկան Մխական Ժողովը կատարած է Մխական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝ իբրեւ անդամ Մխական Խորհուրդի.

- Տիարք՝ Հէրի Գըզըլեան
- Եղուարդ Գորգոյեան
- Ջօրճ Մաշլազեան
- Արթըր Պուտաքեան
- Րիչարտ Վահրատեան

Կը յանձնարարենք որ յետ այսօրիկ Ձեր տարեկան տեղեկագիրը իր ժամանակին Առաջնորդարան ղրկէք:

Այսու օրհնելով Մխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանձայի

Շաբ, 25 Ապրիլ, 1964

Սիրելի Սուրեն,

Պէտք կզգամ սոյն բացատրագիրը կցել ներկայ նամակին: Ինչպէս
կը տեսնես սոյն նամակը պատրաստած էի աւելի կանուխ եւ անոր
առաքումը վստահած էի մեր քարտուղարին, եւ սակայն դժբաղդա-
բար այդ նամակը եւ անոր կցեալ կարգ մը յաւելուածական թուղ-
թերը "միսբլէյս" եղած են մեր քարտուղարին հիւանդութեան պատճա-
ռաւ, եւ այս անփութութիւնը ըսենք ուշացուց տարապայմանօրէն
այս կարեւոր նամակին ատենին առաքումը: Ներողամիտ գտնուելու
է: Կը յուսանք որ Սրբազանը առաջին առթիւ կը փութայ վաւերա-
ցընել մեր նորընտիր հոգաբարձութիւնը:

Մինչեւ ի քաղցր

~~Ի քաղցր~~ տեսութիւն ի Սաութ Միլվոքի, Վիսքոնսըն, յառաջիկայ
վերահաս օրերուն,

Մնամ Բոյդ սիրով եւ աղօթքով,

Shirley
Տէր Տիրան Երէց



St. John's Armenian Church of Greater Detroit

ՍԲ. ՅՈՎԸ. ՄԿՐՏԻՉ ԶԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAŽIAN, PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN

31 Մարտ, 1964

Գերաշնորհ Տ. Սիրոն Արքեպիսկոպոս Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի, Ն.-Ե.
ի նիւ եորկ, Ն.-Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,
Մեծագոյն Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ 1963 տարւոյ Միական Անդամական Ժողովը գումարուեցաւ Ուրբաթ 28 Փետրուար, 1964-ին, մօտ 200 տրատու անդամներու մասնակցութեամբ, ժամը գիշերուան 8,30-ին, Հայ Մշակութային տան սրահին մէջ, ի Սաուիթհիլտ, Միչիկան, Նախագահութեամբ Հովութիւն եւ Ատենապետութեամբ Հայկազ Եաղուպեանի եւ Զարտուղարութեամբ Ներսէս Ներսէսեանի, այս վերջին երկուքը ընտրուած ըլլալով ձեռամբարձ քուէով տեղւոյն վրայ իրենց վերոյիշեալ զոյգ պաշտօններուն:

Սոյն Տարեկան Ժողովի առնչութեամբ ձեզ հետաքրքրող մանրամասնութիւններ հաճեցէք գտնել ներփակ Տարեկան Տեղեկագրի պաշտօնական թուղթին վրայ, տրամադրուած մեզի Առաջնորդարանին կողմէ, այդ նպատակաւ:

Սոյն ժողովին մէջ, ի մէջ այլոց, տեղի ունեցաւ նաեւ մասնակի ընտրութիւն Միական Խորհուրդի հինգ ղաղարեալ անդամներու փոխան:

Ընտրական Յանձնախումբին կողմէ պատրաստուած (որը իր կարգին ընտրուած էր եկեղեցւոյս նախապատրաստական ժողովին մէջ, կայացած 15 Դեկտեմբեր, 1963-ին) տասը հոգինոց թեկնածուներու երկպատիկ ցանկի մը վրայէն, գաղտնի քուէարկութեամբ, առաւելագոյն քուէով ընտրուեցան հինգ ազգայիններ, որոնցմէ առաջին երեք հոգիներունը վերընտրութիւն է իսկականին մէջ, իսկ վերջին երկուքին ընտրութիւնը կը պատահի առաջին անգամ ըլլալով:

Ըստ այսմ ուրեմն հետեւեալ հինգ ազգայինները կը ներկայանան որպէս նորընտիր անդամները Միական Խորհուրդիս ընթացիկ տարւոյս համար:

Պարոնայք ՀԵՐԻ ԳՂՁԸԼԵԱՆ, ԵԴՈՒԱՐԴ ԳՈՐԳՈՅԵԱՆ, ՃՈՐՃ ՄԱՇԼԱԳՃԵԱՆ, ԱՐԹՐ ՊՈՒՏԱԲԵԱՆ եւ ՐԻՉԱՐՏ ՎԱՀՐԱՏԵԱՆ:

Միական Խորհուրդիս նորընտիր կազմը իր լիազումար առաջին նիստին մէջ որ կայացաւ ԳԵ. Մարտ 3, 1964-ին, նոյնութեամբ վերընտրեց իր անցեալ տարուան դիւանը իբրեւ իր նորակազմ դիւանը: Ի գիտութիւն աւելցնենք որ մեր Միական Խորհուրդին անձնակազմը կը բաղկանայ տասնեւմէկ օրինակ նադամներէ: Ասոնցմէ ի բաց առեալ ունինք նաեւ զոյգ մը Պատուոյ Անդամներ որոնք անշուշտ օրինական հանգամանք մը չեն ներկայացներ իբրեւ Միական Խորհուրդի իրաւասու անդամ, այլ պարզապէս պատուոյ անդամներ են, ընտրուած տարիներ առաջ, Միական համայնքիս փափաքով, այդ պատուակալ պաշտօնին կամ հագմանքին, ի վարձատրութիւն իրենց անցեալի բազմամեայ տքնաջան եւ վաստակաւոր ծառայութեան Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյս, սոյն զոյգ պատուոյ անդամներն են, Պարոնայք ՊԵՏՐՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ եւ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ:

Ըստ վերոյիշեալ իրողութեանց ուրեմն 1964 տարւոյ մեր Ծխական Խորհուրդը կը ներկայանայ հետեւեալ կազմով:

Տիարք	ՄԱՐԹԻՆ ԱՌԳԱՐԵԱՆ	ԱՏԵՆԱՊԵՏ
	ԽԱԶԻԿ ՃԱՆ ՍԷՄԻՉԵԱՆ	ՓՈԽ-ԱՏԵՆԱՊԵՏ
	ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ	ԱՏԵՆԱԴՊԻՐ
	ՀԷՐԻ ԳԸԶԸԼԵԱՆ	ԳԱՆՁԱՊԱՀ
	ԵԴՈՒԱՐԴ ԳՈՐԳՈՅԵԱՆ	ՓՈԽ-Ատենադպիր
	ՄԱՐԹԻՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ	ՓՈԽ-Գանձապահ
	ՎԱՀԷ ԲԱԲԵԼԵԱՆ	Խորհրդական
	ՃՈՐՃ ՄԱՇԼԱԳՃԵԱՆ	, ,
	ԵԴՈՒԱՐԴ ԵԱՂՈՒՊԵԱՆ	, ,
	ԱՐԹՁՐ ՊՈՒՏԱՔԵԱՆ	, ,
	ՐԻԶԱՐՏ ՎԱՀՐԱՏԵԱՆ	, ,

Սոյն Հաստատագիրը խոնարհաբար կը ներկայացնենք ձերը Սրբազնութեան, խնդրելով ձեր վաւերացումը եւ օրհնութիւնը մեր Ծխական Խորհուրդի նորընտիր անձնակազմին համար:

Ներփակուած Տարեկան պաշտօնական Տեղեկագրին առնջութեամբ, հաճեցէք ներփակ գտնել նաեւ քանի մը յաւելուածական տեղեկութիւններ կարգ մը եկեղեցապատկան կազմակերպութեանց կամ մարմիններու վերաբերմամբ որոնք չեն նախատեսուած Առաջնորդարանի կողմէ պատրաստուած տարեկան պաշտօնական տեղեկագրի ֆորմին մէջ, այս կազմակերպութիւններն ու մարմիններն են հետեւեալները:

- 1,) - ԷՅ-ՍԻ-ՈՒԱՅ-Օ-ԷՅ ԿՐՏՍԵՐԱՑ
- 2,) - ԳԱԼՈՒՍՏ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ
- 3,) - ԱՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ (կամ Ընկերուհիներու Կոնքրետ)
- 4,) - ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆԻ ՀՈԳԱՏԱՐ ՄԱՐՄԻՆ

Ներփակած ենք նաեւ ամբողջական ցանկը (հանդերձ հասցէներով եւ հեռաձայնի թիւերով) Ծխական Խորհուրդիս անձնակազմին, եկեղեցւոյ Պատգամաւորներուն, վերստուգիչ կամ Հաշուեքնիչ Յանձնախումբին, եւ եկեղեցապատկան կազմակերպութեանց ու մարմիններու Ատենապետներուն:

Ներփակած ենք նաեւ եկեղեցւոյս 1963-ի Տարեկան Տեղեկագրի Պրակներէն, ուր կարելի է գտնել յաւելուածական հետաքրքրական տեղեկութիւններ եկեղեցւոյս գործունէութեանց վերաբերմամբ, ինչպէս նաեւ տարեկան սպառիչ զեկոյցներ, Հովուական ու Ծխական Խորհուրդի եւ մանրամասնեալ տնտեսական (կան ֆինանսական) հաշուետուութիւններ:

Ձայս ներկայացնելով ձերը Սրբազնութեան, մնամ խորին յարգանօք,

Խոնարհ Աղօթակից՝
Սեդրակ Երեմյան
Տէր Տիրան Երէց փառաբան, Հովիւ եւ նախագահ Տարեկան Ընդհանուր Ծխական Ժողովոյ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 11864

Մարտ 31, 1965

Արժանաշնորհ

Տ. Տիրան ԹՀՆՅ. Փափազեան

Հոգեւոր Հովիւ Ա. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Միսկան Խորհուրդի
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Տիրաբ,

Ստացած ենք Ձեր 1965 Մարտ 23 թուակիր տեղեկագիրը, որով
կը տեղեկացնէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 26ին գումարուած
Ձեր Տարեկան Միսկան ժողովին մէջ կատարուած է Միսկան Խորհուրդի
մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը,
կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատար-
ուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝ իբրեւ
անդամ Միսկան Խորհուրդի:

Տիրաբ՝ Ալպէրթ Սարգիսեան
Մարթին Արզարեան
Խաչիկ Սէմիզեան
Սուրէն Կողմանեան
Վահէ Բարէլեան
Եղուադ Եաղուպեան

Կը յանձնարարենք որ Միսկան Խորհուրդի նոր դիւանի անուն-
հասցէները Առաջնորդարան դրկէք առաջին առիթով:

Այսու, օրհնելով Միսկան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք
Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէու-
թեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցւոյդ եւ ի Հոգեւոր շինու-
թիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի



St. John's Armenian Church
of Greater Detroit

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Rev. Fr. Diran Papazian, Pastor

22001 NORTHWESTERN HIGHWAY

PHONE 356-1910

SOUTHFIELD, MICHIGAN

23 Մարտ, 1965

Գերշ. Տ. Սիրոն Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Ի նիւ Եորկ, Ն.-Ե.

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,
Մեծագոյն Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Տարեկան Անդամական
Ժողովը որ սկզբնապէս ծրագրուած էր գումարուիլ Ուրբաթ, 26 Փետրուար 1965-
ին, յետաձգուած ըլլալով աննախընթաց ձիւնամրրիկին պատճառաւ, գումարուեցաւ
իր որոշեալ նոր թուականին ԵՇ. 4 Մարտին, զիշերուան ժամը 8,00ին, Հայ
Մշակութային Տան սրահին մէջ, Ի Սառնափայտ, Միչիկան, մօտ 200 հոգիներու
ներկայութեամբ որոնցմէ ոմանք թէեւ եկեղեցւոյ համակիր սակայն ոչ-ուխտավճառ
անդամ:

Սոյն Տարեկան Անդամական Ժողովը նախագահութեան տակն էր Եկեղեցւոյ Հով-
ուին Տ. Տիրան Երէց Փափագեանի, իսկ Ատենապետութեան եւ Ատենադպրութեան
պաշտօնները վարեցին Պարոնայք Հայկազ Եաղուպեան եւ Ներսէս Ներսէսեան, անոնք
վերոյիշեալ պաշտօններուն ընտրուած ըլլալով ձեռամբարձ, ներկայ իրաւասու
անդամներու քուէներու առաւելութեամբ:

Ժողովը ընթացաւ համաձայն նախապէս պատրաստուած օրակարգին: Հովուին եւ
Մխական Խորհուրդին Տարեկան Տեղեկագիրները անշուշտ զխաւորներն էին օրա-
կարգի հարցերուն: Վերոյիշեալ տեղեկագիրները, ինչպէս նաեւ եկեղեցապատկան
բոլոր կազմակերպութեանց տարեկան զեկոյցները, նիւթական եւ բարոյական համա-
րատուութեամբ, գրքիյկի մէջ ամփոփուած ղրկուած էին նախորօք ծխականներուն
տուները: Սակայն ժողովի ընթացքին Հովիւը եւ Մխական Խորհուրդը տուին իրենց
համառօտ բերանացի զեկոյցները եւ որոնք գնահատանքով ընդունուեցան: Պատե-
հութիւն տրուեցաւ նաեւ եկեղեցւոյ օժանդակ մարմիններուն գործունէութեան
վերաբերմամբ հարցումներ ուղղելու եւ լուսաբանութիւններ ստանալու: Այս
ժողովին ներկայացուեցաւ նաեւ Եկեղեցւոյ Մխական Խորհուրդի Տարեկան ընդհա-
նուր պիւտճէն:

Տեղի ունեցաւ նաեւ Մխական Խորհուրդի մասնակի (6 հոգի) եւ Վերստուգիչ
Յանձնախումբի ամբողջական (3 հոգի) ընտրութիւնները: Ասոնց արդիւնքները
աւելի վարը հաճեցէք գտնել:

Ներկայ պահարանին մէջ պիտի գտնէք մեր Տարեկան Տեղեկագիրներու գրքոյկը,
ինչպէս նաեւ Մխական Խորհուրդի Տեղեկագիրը Առաջնորդարանի կողմէ յատկապէս
պատրաստուած Տարեկան Տեղեկագրի պաշտօնաթուղթին վրայ: Նաեւ սոյն Տարեկան
Տեղեկագրի առնչութեամբ մի քանի անունացանկեր որոնք կը վերաբերին մեր
Մխական դպրոցներուն: Նաեւ համառօտ տեղեկութիւններ մեր եկեղեցւոյ օժանդակ
կազմակերպութեանց մասին:

Օրակարգի կարեւոր հարցերն էին անկասկած Կա ընտրութիւնները որոնց արդիւն-
քին մասին ստորեւ հաճեցէք գտնել հետեւեալ մանրամասնութիւնները:

Քուէարկութեան մասնակցեցան եկեղեցւոյս իրաւասու անդամներէն ընդամէնը
149 հոգի, ընելով իրենց ընտրութիւնը նախապէս պատրաստուած եւ ներկայացուած
երկատիկ ցանկի մը վրայէն: Այս երկատիկ ցանկը պատրաստուած էր կանխորօք

3 հոգինոց ընտրական Յանձնախումբի մը կողմէն որ իր կարգին ընտրուած էր Եկեղեցւոյ Տարեկան Նախապատրաստական ժողովին մէջ որ կայացած էր մեր նախա-
զահուիթեամբ 15 նոյեմբեր, 1964-ին, եկեղեցւոյ մէջ, յաւարտ մեր Կիրակ-
նօրեայ պաշտամունքին:

Քուէներու առաւելոււեամբ հետեւեալ 6 ազգայինները ընտրուեցան Ծխական
Խորհուրդի 1965 տարուոյ նստաշրջանի անդամ:

1,- Տիարք	Ալպէրթ Սարգիսեան	93	Քուէ
2,- ,,	Մարթին Աբգարեան	87	,,
3,- ,,	Խաչիկ Սէմիզեան	77	,,
4,- ,,	Սուրէն Կողմանեան	73	,,
5,- ,,	Վահէ Բաբէլեան	71	,,
6,- ,,	էտուարտ Եաղուպեան	65	,,

Ասոնցմէ թիւ 1-ին եւ թիւ 4-ին ընտրուիւնները առաջին անգամն է որ
տեղի կունենան իսկ մնացեալ չորսինը վերընտրուիւն է:
անպաշտօն

Աւելցնենք որ Ծխական Խորհուրդի պաշտօնակաշի փոխանձումը կատարուեցաւ
յաջորդ շաբթու իսկ ԳՇ, Մարտ 9-ին, եւ ժողովը իր առաջին լիակատար նիստին
մէջ ընտրեց իր նորակազմ դիւանը ըստ հետեւեալին:

- | | |
|--------------------|--------------|
| Մարթին Աբգարեան | ԱտեՆապետ |
| Խաչիկ Ճան Սէմիզեան | Փոխ-ԱտեՆապետ |
| էտուարտ Գորգոյեան | ԱտեՆադպիր |
| Հէրի Գրգըլեան | Գանձապահ |
- Իսկ Ծխական Խորհուրդի մնացեալ 7 անդամներն ալ Խորհրդականներն են
մեր 1965-ի նստաշրջանին ըստ հետեւեալին,-
Արթըր Արտաշէս Պուտաբեան
Սուրէն Կողմանեան
Ճորճ Մաշլագեան
Վահէ Բաբէլեան
Ալպէրթ Սարգիսեան
Րիչարտ Վահրատեան
էտուարտ Եաղուպեան
Ասոնցմէ դուրս նաեւ ունինք զոյգ մը Պատուոյ անդամներ յանձինս
Հայրապետ Միքայէլեանի
Պետրոս Մանուկեանի

Իսկ նոր վերստուգիչ Յանձնախումբի 3 հոգինոց անձնակազմը կը ներկայանայ
ըստ հետեւեալին,

1,- Տիարք	Ալպէրթ Սիմոնեան	92	քուէ
2,- ,,	Կարպիս Օհանեան	90	,,
3,- ,,	Արմանտ Խրիմեան	82	,,

Ասոնցմէ առաջինինը վերընտրուիւն է, իսկ մնացեալ երկուքինը առաջին
անգամ ըլլալով ընտրուիւն է:

Սոյն հաստատագիրը խոնարհաբար կը մատուցանենք Ձերդ Սրբազնութեան եւ
ակնդէտ կսպասենք ձեր վաւերացման եւ օրհնութեան պաշտօնագրին որպէս զի
նորակազմ Ծխական Խորհուրդս իր ընծայումը ունենայ շուտով եւ ապա լծուի
պաշտօնապէս իր յառաջիկայ աշխատանքներուն արդիւնալից կերպով:

Վահրատեան
Արմանտ Խրիմեան

Խոնարհ Աղօթակից
Տիարք Սիմոն Երեմ ԳԱՓԱՋԵԱՆ
Տէր Տիր Ան Երեմ ԳԱՓԱՋԵԱՆ
Հովիւ եւ Նախագահ
Անդամական Ընդհանուր Ժողովոյ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաքմորդ

Archbishop Sion Manougian, Primate

Ձիւ 12882
Մարտ 4, 1966

Հոգեշնորհ
Տ. Եղիշէ վրդ. Կիզիրեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Եւ Մախազան Գառուարժան Ժիական Խորհուրդի
Քիթրոյթ.

Սիրելի Հայր Եղիշէ,

Ստացած ենք Ձեր 1966 Մարտ 2 թուակիր տեղեկագիրը, որով կը տեղեկացնէիք թէ Ձեր մախազանութեամբ՝ Գեորուար 24ին գումարուած Ձեր Տարեկան Ժիական Ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը ինդրէիք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Յիշատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է թեմական Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները իջրել անգամ ժիական Խորհուրդի.

Տիարք՝ Տարութիւն Եղիազար Գզրւեան
Փրոֆ. Ժորժ Մ. Քիւրէճեան
Տարութիւն Զարդարեան
Տիգրան Թափրալեան
Առեփան Գոյաճեան

Եր յանձնարարենք որ Ձեր ժիական Խորհուրդի նոր դիւանի անուն
--հասցէները Առաջնորդարան ղրկէք փութով:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Եւ Գանատայի



St. John's Armenian Church
of Greater Detroit

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Rev. Fr. Diran Papazian, Pastor

22001 NORTHWESTERN HIGHWAY

PHONE 356-1910

SOUTHFIELD, MICHIGAN

Մարտ 2, 1966

Գերաշնորհ
Տ. Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Այսու կուզանք յայտնել Ձերդ Սրբազնութեան թէ 1966, փետրուար
24ին գումարուած եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովին մէջ, հետեւեալ
պորժօն անդամները օրինաւոր կերպով Մխական Խորհուրդի անդամ ընտրուեցան:

Տիարք Յարութիւն Եղիազար Գզըլեան
ՓրօՅ, Ճորճ Մ, Բիւրէճեան
Յարութիւն Ջարդարեան
Տիգրան Թափրալեան
Ստեփան Պօյաճեան

Այսու խոնարհաբար կը խնդրենք Ձերդ Սրբազնութենէն որ բարեհաճիք
վաւերացնել վերոյիշեալ անձներուն ընտրութիւնը:

Մատչիմք ի համբոյր Ձերդ Սրբազնութեան Ս, Աջոյն

Մնամք խոնարհաբար աղօթակից

Ի դիմաց Մխական անդամական ժողովի

Երեմ Գոյ Տեղեկ
Եղիշէ վարդապետ Կիզիրեան
Նախագահ

Վարդապետ
Աբրահամ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 17012
Փետրուար 28, 1967

Հոգեշնորհ
Տ. Եղիշէ Մ. Վրդ. Կիզիբեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
եւ Նախագահ Միական Խորհուրդի
Տիթրոյթ.

Սիրելի Հայր Եղիշէ.

Ստացած ենք 1967 Փետրուար 21 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 17ին գումարուած Ձեր Միական Ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Միական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Այս առիթով կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ մօտէն չեն հետեւած Թեմական Կանոնադրութեան յօդուածներուն, եւ պակասուոր տեղեկութիւններ զրկած են Առաջնորդարան: Ուստի, այժմէն կ'ազդարարենք որ յառաջիկային կարեւորութեամբ նկատի պիտի առանենք գործադրութիւնը Կանոնադրութեան տրամադրութեանց:

Հանեցէք փութով Առաջնորդարան զրկել նորընտիր Դիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի Հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Փառնակ Աղամեան
Մարթին Արզարեան
Միքայէլ Մեղրիկեան
Ալպըրդ Սարգիսեան
Խաչիկ Սէմիզեան
Արշաւիր Եղիսեան

ՍԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ՏԻԲՐՈՅԹԻ

St. John's Armenian Church
OF GREATER DETROIT



VERY REV. YEGHISHE V. GIZIRIAN
REV. FR. DIRAN PAPAIZIAN

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

Փետրուար 21, 1967

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Եպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Այսու կուգանք յայտնել Ձերդ Սրբազանութեան թէ 1967 Փետրուար 17ին գումարուած եկեղեցւոյ տարեկան ծխական ժողովին մէջ, հետեւեալ գործօն անգամները օրինաւոր կերպով Ծխական Խորհուրդի անգամ ընտրուեցան:

Տիարք Բառնակ Ագամեան
Մարթին Աբգարեան
Միքայէլ Մեղրիկեան
Ալպէրթ Սարգիսեան
Խաչիկ Սէմիզեան
Արշաւիր Եղիսեան

Այսու խոնարհաբար կը խնդրենք Ձերդ Սրբազանութենէն որ բարեհաճիք վաւերացնել վերոյիշեալ անձերուն ընտրութիւնը:

Մատչիմք ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն

Մնամք խոնարհաբար աղօթակից

Ի դիմաց Ծխական անգամական ժողովի

Եղիշէ Մ. Վրդ. Կիզիրեան
Նախագահ

Յ.Գ.

Ծխական ժողովին ներկայ եղան եւ քուէարկեցին երկու հարիւր տրատու անգամներ:



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Առաջնորդ

Bishop Torkom Manoukian, Primate

Թիւ 20311

Փետրուար 29, 1968

Հոգեշնորհ

Տ. Եղիշէ Մ. Վրդ. Կիզիբեան

Հոգեւոր Հովիւ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ

եւ Նախագահ Միական Խորհուրդի

Տիթրոյթ.

Սիրելի Հայր Եղիշէ,

Ստացած ենք 1968 Փետրուար 26 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ ֆետրուար 23ին գումարուած Ձեր Միական Ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Միական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հանցէք փութով Առաջնորդարան ղրկել Միական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց եւ Եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու ատենապետներուն անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնեքով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայէառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Սիրող ողջունել

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիրաք՝ ձօրճ Բիւրէճեան
Հէրրի Գրգըլեան
Տիգրան Թանրալեան
Եղուարդ Գորգօեան
Կարպիս Օհանեան

ՍԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵԾԱԿՈՅՆ ՏԻԹՐՈՅԻԻ

St. John's Armenian Church
OF GREATER DETROIT



VERY REV. YEGHISHE V. GIZIRIAN
REV. FR. DIRAN PAPAIZIAN

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

Փետրուար 26, 1968

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Եպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Այսու կուգանք յայտնել Ձերդ Սրբազնութեան թէ եկեղեցւոյս
Ժխական ընտրական ժողովը գումարուեցաւ Ուրբաթ, Փետրուար 23, 1968,
երեկոյեան ժամը 8:30ին եկեղեցւոյս սրահին մէջ, մեր նախագահութեամբ եւ
381 տրատու անդամներու ներկայութեան: Օրուան ժողովին գիւտնի անդամներ
ընտրուեցան Տիարք Արա Հայկ, Ատենապետ, եւ Ներսէս Ներսէսեան,
Ատենադպիր:

Օրինաւոր քուէարկութեամբ հետեւեալ անձնաւորութիւնները Ծխական
Խորհուրդի անգամ ընտրուեցան երկու տարուան պաշտօնավարութեան համար:

- Տիարք Ճօրճ Բիւրէճեան
- Հէրրի Գրգըլեան
- Տիգրան Թափրալեան
- Կարպիս Օհանեան
- Էտուրտ Գօրգօեան

Այսու կը խնդրենք Ձերդ Սրբազնութենէն որ բարեհաճիք վաւերացնել
վերոյիշեալ անգամոց ընտրութիւնը:

Մատչիմք ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն

Ի գիմաց Ծխական ընտրական ժողովի

Էմիլ Վր. Կիւրեան

Եղիշէ Ս. Վրդ. Կիւրեան, նախագահ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Archbishop Torhom Manougian, Primate

Առաջնորդ

Թիւ 21685
Մարտ 6, 1969

Հոգեշնորհ
Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Կիզիրեան
Հովիւ Ս. Վովհաննէս Սկրաիշ Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի
Տիթրոյթ.

Սիրելի Հայր Եղիշէ,

Ստացած ենք 1969 Մարտ 8 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 28ին գումարուած Ձեր ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Սկսած ունենալով որ Ձեր ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Աստուծոյ արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժիական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան զրկել ժիական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց եւ Եկեղեցւոյ ընթացիկ մարմիններու անդամներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Սուրբ Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Ներսէս Կէտիկեան
Ճէք Գալլազեան
Ճէք Մարկոսեան
Մայրը՝ Մեղրիկեան
Ճան Սօրաեան
Աւարթ Սիմոնեան

ՍԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ՏԻՔՐՈՅՔԻ

St. John's Armenian Church
OF GREATER DETROIT



VERY REV. YEGHISHE V. GIZIRIAN
REV. FR. DIRAN PAPAZIAN

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

Մարտ 3, 1969

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Այսու կուզանք յայտնել Ձերդ Սրբազնութեան թէ եկեղեցւոյս տարեկան ընտրական ժողովը տեղի ունեցաւ Փետրուար 28, 1969, Ուրբաթ երեկոյեան ժամը 8:30-ին Մշակութային շէնքին մէջ, 208 տրատու անդամներու ներկայութեան: Օրուան ժողովի դիւանի-անդամներ ընտրուեցան Տիար Հայկազ Եազուպեան, Ատենապետ, եւ Օրդ. Շաքէ Կոտոշեան, Ատենադպիր:

Օրինաւոր քուէարկութեամբ հետեւեալ անձնաւորութիւնները ծիական խորհուրդի անդամ ընտրուեցան երկու տարուան պաշտօնավարութեան համար:


Տիարք՝ Ներսէս Կէտիկեան
Ճէյգ Գավլազեան
Ճէյգ Մարկոսեան
Մայքրլ Մեղրիկեան
Ճան Նօրաեան
Ալպրթ Սիմոնեան

Այսու կը խնդրենք Ձերդ Սրբազնութենէն որ բարեհաճիք վաւերացնել վերոյիշեալ անդամոց ընտրութիւնը:

Մատչիմք ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն
ի դիմաց ծիական Ընտրական ժողովի
Էրիշ Բր. Զեյտեան
եղիշէ Ծ. վրդ. Կիզիրեան, Նախագահ

ՍԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ՏԻՔՐՈՅՔԻ

St. John's Armenian Church
OF GREATER DETROIT



REV. DIRAN PAPA ZIAN
REV. PAREN AVEDIKIAN
PASTORS

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

26 Փետրուար, 1970

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Ի նիւ Եորկ, Ն.Ե.

Սիրելի Սրբազան,
Եկեղեցւոյ Տարեկան Անդամական Ժողովը գումարուեցաւ ըստ կանխապէս
որոշուած թուականին՝ Ուրբաթ 20 Փետրուար, 1970, ժամը երեկոյեան 8-ին,
Եկեղեցւոյ Հայ Մշակութային Տան մէջ:

Շուտով կը փութացուին Առաջնորդարան Եկեղեցւոյս պաշտօնական Տարե-
կան ամփոփ Տեղեկագիրն ու Հաշուետուութիւնը՝ Առաջնորդարանէն Հայթայթ-
Թրուած պաշտօնաթուղթերուն վրայ, համաձայն մեզի տրուած հարցումներուն:


Մինչ այդ սակայն, կը փափաքինք հաղորդել ամիջապէս Ձերդ Սրբազանու-
թեան՝ կատարուած ընտրութեանց արդիւնքը, որպէս զի ժամ առաջ ի ձեռինն
ունենալով ձեր վաւերացումը, կարենանք եկեղեցւոյս գործառնութիւնները
կանոնաւոր ընթացքի մէջ մտցնել:

Եկեղեցւոյ տրատու անդամներէն՝ 248 իրաւասու անդամներու մասնակ-
ցութեամբ՝ ունեցանք ընտրութիւն: Ծխական Խորհուրդի եւ Հաշուեքննիչ
Յանձնախումբի -մասնակի- եւ Ընտրողական Յանձնախումբի, համաձայն մեր
Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց: Իբրեւ ծանօթութիւն աւելցը-
նենք որ մեր Թեմական Պատգամաւորներուն շրջանը կ'աւարտի 1970-ին,
ուստի տարի մը եւս մեր հինգ պատգամաւորները իրենց պաշտօնավարութիւնը
պիտի շարունակեն եւ յառաջիկայ տարի է որ նոր ընտրութիւն պիտի կա-
տարուի:

Քուէից առաւելութեամբ Ծխական Խորհուրդի անդամ ընտրուեցան հետեւ-
եալ վեց ազգայինները՝ Տիարք Սուրեն Աբրահամեան, Հէրի Գրգըլեան, Եդ-
ուարդ Բ. Գորգոյեան, Արշալիր Եղիսէյեան, Լիօ Ջամանիկեան եւ Ստեփան
Պօյաճեան: Հաշուեքննիչ Յանձնախումբի երեք հոգինոց կազմը ամբողջա-
ցաւ՝ ընտրութեամբը՝ Տիար ծան Պահտուրեանի: Իսկ հետեւեալ Երեք ազ-
գայինները 1970-ի շրջանին համար մեր Ընտրողական Յանձնախումբը կը
կազմեն, Տիարք Մարթին Աբգարեան, Հայկազ Եղուպեան եւ Ներսէս Ներսէս-
եան:

Ներփակ հաճեցէք ունենալ ըստ Առաջնորդական հրահանգին՝ զոյգ մը
օրինակներ մեր պաշտօնական քուէաթուղթերէն, ուր պատկերուած կ'ընաք
զտնել իւրաքանչիւրին ստացած քուէներուն քանակը: Յառաջիկային կը
ղրկենք նաեւ՝ մեր Ծխական Խորհուրդի դիւանին նոր կազմը եւ Խորհրդա-
կաններու լրիւ կազմը, հանդերձ հասցէներով եւ հեռախօսի թիւերով:

ՍԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ՏԻՔՐՈՅՔԻ



St. John's Armenian Church
OF GREATER DETROIT

REV. DIRAN PAPA ZIAN
REV. PAREN AVEDIKIAN
PASTORS

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

- Շարունակութիւն -

Երբ յատուկ ընտրութիւն կայանայ, յետ Առաջնորդական վաւերացման նոր
ընտրութեանց:

Կը ծրագրենք նաեւ յետ վերոյիշեալ նախապատրաստութեանց՝ կատարել
Միական Խորհուրդի ուխտառութիւնը, յարմար Կիրակի մը եկեղեցւոյս մէջ,
յաւարտ Ս. Պատարագի, եւ հաղորդել զիրենք, ինչպէս նաեւ նոյն առիթով՝
տալով իւրաքանչիւրին Առաջնորդարանի պատրաստած Միական Խորհուրդականի
համար Առձեռն պրակներէն - Բերիշ Բառունսըլ Մէնուէլ - մէյմէկ հատ եւ
Թեմական Կանոնադրութեան գրքերէն մէկական օրինակ որպէս զի սերտեն
իրենց պարտաւորութիւնները:

Ուստի պիտի խնդրենք որ տնօրինէք առաքումը բաւարար թիւով վերո-
յիշեալ գրքորկներէն՝ իրենց նպատակին գործածուելու համար: Իսկ առա-
ջին առթիւ կը խնդրենք որ նոր ընտրութեանց վաւերացումը փութացնէք
որպէս զի նորընտիր Միական Խորհուրդը ամիշապէս եւ պաշտօնապէս ժողովի
կանչենք եւ ընթացք տանք նոր Դիւանի ընտրութեան:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն,
Մնամք Ակնածանօք,
Խոնարհ Աղօթակից՝

Տէր Տիրան Երէց,
Հովիւ

Թիւ 22355
Փետրուար 17, 1970

Արժանաշնորհ
Տ. Տիրան Բնյ. Փափագեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք 12 Փետրուար 1970 թուակիր 2եր նամակը, որով կը
յայտնէք թէ Ժիական Խորհուրդիդ անդամ Տիրան Տէր Գալալաբեան բանաւոր
պատճառով հրաժարած է, եւ անցեալ տարուայ Ժիական Ժողովին մէջ կա-
տարուած ընտրութեան առաւելագոյն քուէ ստացող Տիրան Սիմոն Քաշմեանը
հրաւիրած էք պաշտօնավարելու մինչեւ յաջորդ Տարեկան Ժիական Ժողով,
լրացնելու համար Նախորդին շրջանը, եւ կը խնդրէք վաւերացնել Պրն.
Քաշմեանի պաշտօնը:

Այսու կը վաւերացնենք Պրն. Սիմոն Քաշմեանի անդամակցութիւնը
Ժիական Խորհուրդիդ, հիմնուած 2եր տուած տեղեկութեան վրայ:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Handwritten signature

St. John's Armenian Church
OF GREATER DETROIT



ՄԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵՄԱԳՈՅՆ ՏԻՔՐՈՅՔԻ

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

VERY REV. YEGHISHE V. GIZIRIAN
REV. FR. DIRAN PAPAIZIAN

12 Փետրուար, 1970

Գերշն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Ի նիւ Եորկ, Ն.Ե.

Սիրելի Արքագան,

Վերջերս հրատարումի մը հետեւանքով՝ Միսական Խորհուրդին մէջ
գոյացած բացը գոցելու համար, ըստ մեր Թեմական Կանոնադրութեան
տրամադրութեան՝ հրաւիրած ենք որ այդ բացը գոցէ՝ անցեալ տարուայ
Ընդհանուր Անդամական Ժողովին մէջ ընտրութեանց ընթացքին յաջորդ
առաւելագոյն քուէ ստացող ազգայինը՝ Պարոն Սիմոն Թաշճեան: Պա-
րոն Թաշճեան եկեղեցասէր եւ ազգասէր անձնաւորութիւն մըն է եւ
անցեալին, 50-ական թուականներուն՝ ծառայած է Հոգաբարձական կազ-
մին վրայ, մէկ շրջան, եւ իր պարտականութիւնները պատուով կատարել է
յետոյ եւ շրջանը աւարտել է յետոյ դադրած է պաշտօնավարութենէ:

Կ'սպասենք ուրեմն ձեր վաւերացման որպէս զի յիշեալը պաշտօնակապէս
հրաւիրենք Միսական Խորհուրդիս կազմին վրայ, աւարտելու համար հրա-
ժարեալին շրջանը որ մէկ տարի է:

Ստորեւ հաճեցէք գտնել հրատարեալին անունն ու հասցէն եւ հե-
ռաձայնի թիւը, ինչպէս նաեւ նորին վերաբերեալ նոյն տեղեկութիւն-
ները:

Մնամք Խոնարհաբար,
Աղօթակից՝ *Handwritten signature*
Տ. ՏԻՐԱՆ ԲՆՅՑ. ՓԱՓԱԶԵԱՆ

Հինը՝
Jack Kavlakian
29075 Summerwood
Farmington, Mich. 48024
626-1857

Նորը՝
Simon Tashjian
18120 Locherbie
Birmingham, Mich. 48010
642-2062



St. John's Armenian Church

ՍՐ. ՅՈՎԷ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAZIAN, PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY

★

PHONE 356-1910

★

SOUTHFIELD, MICHIGAN

5 Մարտ, 1971

Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ,
Ի նիւ Եորկ, Ն.Ե.,

Սիրելի Սրբազան,
Մեր ընտրական արդիւնքներու մասին՝ 2 Մարտ
թուակրով՝ ձեզի գրուած նամակին մէջ, տեսայ
որ վրիպումով մը, Ծխական Խորհուրդի ընտրու-
եալներու ցանկին մէջ՝ Ալպէրթ Սիմոնեանի ստա-
ցած քուէներու թիւը եղած է 169, մինչդեռ
պէտք է ըլլար 159, ըստ որում ուրեմն անոր
տեղը ընտրեալներու կարգին մէջ, ուր հետեւած
ենք քուէներու առաւելութեան աստիճանին՝ շի-
տակ է: Փութով կ'ընեմ այս ճշդումը որպէս զի
շփոթութեան տեղի չի տրուի: Կը խնդրուի ու-
րեմն, ըստ այսմ ճշդել խնդրոյ առարկայ քուէ-
ներու թիւը վերոյիշեալ թուակրով նամակին մէջ,
ներկայ նամակի լուսաբանութեան ներքեւ:

Մնամք Ակնածանօք՝

S. Տիրան Բհնյ.



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՂԻՍԿՈՂՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

Archbishop Torkom Manougian, Primate

Խիւ 22886
Մարտ 8, 1971

Արժանաշնորհ
Տ. Տիրան Զհնյ. Փափագեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք 1971 Մարտ 2 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ, Փետրուար 26ին գումարուած Ձեր Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Ժիական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի անգամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր Կիւանի անդամոց, նոր ընտրուած պատգամաւորներու եւ եկեղեցւոյ ընթակալ մարմիններու տեսնապետներուն անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը: Ինչպէս նաեւ Առաջնորդարանէն ձեզի ղրկուած տեղեկագիրի հարցարանը:

Սրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՂԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Տէր Կազանճեան
Մայրը՝ Մեղրիկեան
Մարթին Աբգարեան
Տէր Մարկոսեան
Ալպրթ Սիմոնեան

ՍՔ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ՏԻՔՐՈՅՔԻ



St. John's Armenian Church
OF GREATER DETROIT

VERY REV. YEGHISHE V. GIZIRIAN
REV. FR. DIRAN PAPAZIAN

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

2 Մարտ, 1971

Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ եւ նախագահ Թեմական Խորհրդոյ,
ի նիւ Երրկ, Ն.Ե.,

Սիրելի Սրբազան,
Մեծագոյն Տիբրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Տարեկան Անդամական
Ժողովը տեղի ունեցաւ Փետրուար 26, 1971, Ուրբաթ երեկոյեան ժամը 8.00-
ին Հայ Աշակուծախի Տան Մէջ:

Ներկայիւս կը փափաքինք ամիշապէս ձեզի ներկայացնել ընտրութեան արդիւնք:
Այլ մանրամասնութիւններ կը թողունք մեր տարեկան Տեղեկագրին՝ Առաջնոր-
դարանէն տրամադրուած պաշտօնաթուղթերու վրայ, աւելի վերջը:

Ընտրողական Յանձնախումբի կողմէ ինծի տրամադրուած տեղեկութեան համաձայն,
պաշտօնապէս քուէարկուներու թիւը եղած է 337: Հետեւեալները ընտրուած
կամ վերընտրուած են եկեղեցւոյս զանազան պաշտօնական մամրիներուն հա-
մար:

Ծխական Խորհուրդի Ընտրեալներ՝ իրենց քուէներու առաւելութեան աստիճանով՝

ձեք Գազանճեան	189	քուէ	
Մայքըլ Մեղրիկեան	175	"	վերընտրուած
Մարթին Աբգարեան	167	"	
ձեք Մարկոսեան	163	"	վերընտրուած
Ալպէրթ Սիմոնեան	169	"	"

Թեմական Պատգամաւորներն են՝ 4 տարուայ շրջանով (1971 - 1974)
(Առաջին անգամ ըլլալով համայնքս կ'օժտուի եօթը պատգամաւորներով որ
առաւելագոյն թոյլտուութիւնն է համայնքի մը համաձայն իր ծխական անդամ-
ներու քանակին)

էտուըրտ Մարտիկեան	246	քուէ	վերընտրուած
Արա Հայկ Սրկ.	226	"	"
Դանիէլ Շահան Սրկ.	203	"	"
էտուըրտ Գորգոյեան	185	"	"
Մարթին Աբգարեան	168	"	"
Միհրան Հօփլամազեան Սրկ.	160	"	
Յարութիւն Էքիզեան Սրկ.	142	"	

Եռանդամ Ըտրողական Յանձնախումբի անդամ ընտրուած են՝

ՍՐ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ՏԻՔՐՈՅՔԻ



St. John's Armenian Church
OF GREATER DETROIT

VERY REV. YEGHISHE V. GIZIRIAN
REV. FR. DIRAN PAPAIZIAN

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

— Շարունակ թիվ —

Ընտրողական Յանձնախումբի անդամներ ընտրուած են՝

ձորճ Բիւրճեճեան	219	քուճ	
Յարութիւն Զարդարեան	155	"	
Հայկազ Եաղուպեան	135	"	վերընտրուած

Եռանդամ վերստուգիչ Յանձնախումբի պակսող մէկ անդամի փոխարէն անդամ ընտրուած է՝

Րիչարտ Վահրատեան 190 քուճ

Զայս հաղորդելով ձերը սրբազնութեան եւ սպասելով ձեր արագ վաւերացումին՝,

Մնամք Ձերը Ակնածանօք՝

Տիգրան Բնիկ

S. Տիրան Բնիկ. Փափագեան,
Հովիւ

ՍԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ
ՄԵՄԱԳՈՅՆ ՏԻՔՐՈՅԻ

St. John's Armenian Church
OF GREATER DETROIT



REV. DIRAN PAPA ZIAN
VERY REV. PAREN AVEDIKIAN
PASTORS

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE: 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN 48075

6 Մարտ, 1972

Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Առաջնորդարան Հայոց Ի նիւ Եորկ, Ն.Ե.,

Սիրելի Առաջնորդ Սրբազան Հայր,
Մեծագոյն Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Տարեկան Ծխական
Անդամական Ժողովը գումարուեցաւ համաձայն կանխորոշուած թուականին, Ուր-
բաթ, Փետրուար 25, 1972-ին, երեկոյեան ժամը 8.00-ին, եկեղեցապատկան Հայ
Մշակութային Տան սրահին մէջ, մեր նախագահութեամբ եւ ընդամենը 329 տրա-
տու անդամներու մասնակցութեամբ: Ժողովին դիւանին Ատենապետ եւ Ատենա-
դրպիր ընտրուեցան յաջորդաբար, ձեռամբարձ քուէով՝ Պարոն Արա Հայկ եւ Օրի-
որդ Շաքէ Կոտոշեան:

Ժողովը կարգապահ մթնոլորտի մէջ ի յառաջագունէ պատրաստուած օրակարգի
նիւթերուն անցաւ եւ տուաւ համապատասխան լուծումներ կամ որոշումներ:

Սոյն նամակը կը գրուի ձեզի սակայն յատկապէս օրուան ընտրութեանց ար-
դիւնքը հաղորդելու համար, որպէս զի շուտով կարենանք ապահովել ձեզմէ՝ կա-
յացած ընտրութեանց վաւերացումը, այդ պատճառաւ մանրամասնութիւններ չեն
տրուած այս նամակին մէջ: Մեր տարեկան գործունէութեան լրիւ պատկերը՝
բարոյական թէ՛ նիւթական գործունէութեանց լրիւ համարատուութեամբ՝ հաճե-
ցէք գտնել մեր կողմէ պատրաստուած եկեղեցւոյ Տարեկան Տեղեկագրին մէջ,
ինչպէս նաեւ Առաջնորդարանի կողմէ տրամադրուած Տարեկան Տեղեկագրի պաշ-
տօնական թուղթերուն վրայ որոնք զատ պահարանով արդէն իսկ առաքուած են
Առաջնորդարանի հասցէին:

Ընտրութիւններ կայացան նոր Ընտրողական Յանձնախումբի, Հաշուեքննիչ
Յանձնախումբի եւ Ծխական Խորհուրդի, այս նպատակին համար Ընտրողական
Յանձնախումբին կողմէ նախապէս պատրաստուած երկպատիկ ցանկի մը վրայէն:

Առ այժմ կը փութանք ձեզի ներկայացնել մեր ընտրութեանց արդիւնքը եւ
կը խնդրենք որ բարեհաճիք վաւերացնել հետեւեալ ազգայնոց ընտրութիւնը:

Ընտրողական Յանձնախումբ.- Մարթին Մանուկեան 198 քուէ, Ջարլի Սթան-
պօլեան 164 քուէ եւ Արշաւիր Եղիսեան 159 քուէ:

Հաշուեքննիչ Յանձնախումբ.- Եռանդամ Յանձնախումբին նորընտիր անդամը
կ'ըլլայ Հէրի Բելչ 202 քուէ:

Ծխական Խորհուրդ.- Հոգաբարձական կազմի նորընտիր 6 անդամներն են՝
Սուրէն Աբրահամեան -վերընտ. 187 քուէ, Էտուարտ Գորգոյեան -վերընտ. 162
քուէ, Հէրի Թերզեան -առաջին ընտրութիւն 159 քուէ, Լիօ Չամանիկեան -վեր.
154 քուէ, Ստեփան Պօյաճեան -վեր. 153 քուէ եւ Հէրի Գրգըլեան -վեր. 150 քուէ:
Աղօթաբար

Ստենապետին՝ Ատենապետին՝
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Առաջնորդարան Հայոց Ի նիւ Եորկ, Ն.Ե.,
Սիրելի Առաջնորդ Սրբազան Հայր,
Մեծագոյն Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ
Եկեղեցւոյ Տարեկան Ծխական
Անդամական Ժողովը
գումարուեցաւ
համաձայն
կանխորոշուած
թուականին,
Ուրբաթ,
Փետրուար 25,
1972-ին,
երեկոյեան
ժամը 8.00-ին,
եկեղեցապատկան
Հայ Մշակութային
Տան սրահին
մէջ, մեր
նախագահութեամբ
եւ ընդամենը
329 տրատու
անդամներու
մասնակցութեամբ:
Ժողովին
դիւանին
Ատենապետ
եւ Ատենադրպիր
ընտրուեցան
յաջորդաբար,
ձեռամբարձ
քուէով՝
Պարոն Արա
Հայկ եւ Օրիորդ
Շաքէ Կոտոշեան:

Ե.Գ.

000000

ST. JOHN'S ARMENIAN CHURCH

BALLOT PRESENTED TO THE PARISH ASSEMBLY

Prepared by the Nominating Committee:

Friday, February 25, 1972

8:00 P.M.

Armenian Cultural Building

George P. Keurajian, Chairman

Haigaz Yagoobian

Harry Zartarian

329 Ballots
ZAK

CANDIDATES FOR PARISH COUNCIL
(Vote for 6 only)

- x 187 1. Souren Aprahamian (Incumbent)
- 82 2. Howard Atesian, Sr.
- x 153 3. Steve Boyajian (Incumbent)
- 134 4. Martin Cholakian
- 110 5. Alex Keurajian
- x 150 6. Harry A. Kezelian (Incumbent)
- x 162 7. Edward B. Korkoian (Incumbent)
- 140 8. Arthur Mardigian
- 132 9. Moses Moushmoulian
- 63 10. Jack Shahbazian
- x 159 11. Harry Terzian
- x 154 12. Leo Zamanigian (Incumbent)

CANDIDATES FOR NOMINATING COMMITTEE
(Vote for 3 Only)

- x 198 1. Martin Manoogian
- 133 2. John Noraian
- 130 3. Vahe Papelian
- x 164 4. Charles Stamboulian
- x 159 5. Archie Yeghissian
- 146 6. Harry Zartarian

CANDIDATES FOR AUDITING COMMITTEE
(Vote for 1 only)

- x 202 1. Harry Kelch
- 114 2. Sam Soultanian

George P. Kourajian

Feb 25, 1972



Տիրույթ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28429
Մարտ 14, 1972

Արժանաշնորհ
Տ. Տիրան Զինյ. Փափազեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախագահ ժխական Խորհուրդի
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք 1972 Մարտ 6 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 25ին գումարուած
Ձեր ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի վեց
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը,
կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժխական ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց եւ Եկեղեցւոյ դ ենթակայ մարմիններու ատենապետներու
անունը, իսսցէն եւ հեռաձայնի թիւը, ինչպէս նաեւ ժխական ժողովի
ատենագրութիւնը եւ Առաջնորդանէն ղրկուած տպագրեալ տեղեկագրի
ֆորմը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ դ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի դ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԸՅԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Սուրէն Աբրահամեան
Էտուարտ Դորգոյեան
Հէրի Թերզեան
Լիօ Զամանիկեան
Ստեփան Գոյաճեան
Հէրի Գրգըլեան

Թիւ 24780

Փետրուար 19, 1976

Հոգեշնորհ

Տ. Փառէն Վրդ. Աւետիքեան

Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ

Նախագահ Ժիական Խորհուրդի

Տիթրոյթ.

Սիրելի Հայր Փառէն,

Ստացած ենք Փետրուար 18, 1976 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Փետրուար 13ին զումարուած համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժիական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունները:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ 2եր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՅԳԻՍԿՈՂՈՍ

Առաջնորդ

Արթըր Պարսամեան
Մարթին Չոլագեան
Արմէն Յովնանեան

Մայր Գայսէրեան
Ռիչըրտ Նորսիկեան
Հերրի Թէրզեան

Թիւ 24780
Փետրուար 19, 1976

Հոգեշնորհ
Տ. Փառէն Վրդ. Աւետիքեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Նկեղեցւոյ
Նախագահ Ժխական Խորհուրդի
Տիթրոյթ.

Սիրելի Հայր Փառէն,

Ստացած ենք Փետրուար 18, 1976 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Փետրուար 13ին գումարուած համայնքիդ
Ժխական ժողովին մէջ կատարուած է Ժխական Խորհուրդի վեց անդամոց ընա-
րութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժխական ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժխ-
կան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժխական Խորհուրդի նորընտիր
Գիւմնի անդամոց անունները:

Օրհնելով Ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ 2եր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Նկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Արթըր Պարսամեան
Մարթին Հոլագեան
Արմէն Յովնանեան

Մայր Գայսէրեան
Ռիչըրտ Նորսիկեան
Հերրի Թէրզեան